

ՓԻԼՈՆԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Փիլոնի փիլիսոփայական-աստուածաբանական բարոյագիտութեան համաձայն, մարդկային *հոգին* բանտարկուած է մարդու նիւթական մարմնին մէջ եւ մարմնական մահէն ետք, անմահ հոգին բոլորովին նոր կեանքի մը պիտի վերակոչուի: Այս պատկերացումը Փիլոն պիտի առնէր աստուածաշնչեան «մեղքի ուսմունքին»: Փիլոնի համաձայն, մարդիկ ի ծնէ մեղաւոր են, նոյնիսկ ամենէն առաքինին կը կրէ այդ մեղքը (յուն.՝ hamartía):

Փիլոն, Պլատոնի նման կ'անտեսէր երկրային նիւթեղէնութիւնը (Materialism) եւ յունական փիլիսոփայութեան հետեւելով, կը նպատակադրէր՝ հոգիի ազատագրութիւնը:

Հոգիի ազատագրութեան համար, սակայն, Փիլոն չէր ընտրեր ստոյիկեան փիլիսոփայութեան ուղին, որ մարդկային «մասնակի լոգոս»ին եւ տիեզերական «ընդհանուր լոգոս»ին վերամիացումն է, որովհետեւ սա Փիլոնի համար անկարելիութիւն մըն է: Փիլոն, հրեական աստուածաբանական ուղին ընտրելով կը ձգտէր *աստուածոտեսութեան*³⁴ (յուն.՝ theoptía):

Հոգիի այս ազատագրութիւնը տեղի կ'ունենայ տեսակ մը անմարմնացումի միջոցով, երբ հոգին կը յաջողի զուտ ոգեղէն ոլորտի մը մէջ մտնել, ուր կարելի է նմանօրինակ աստուածոտեսութիւն մը:

Փիլոնի Ալեքսանդրացիի *աստուածոտեսութեան* այս գաղափարը, թէեւ խորհրդապաշտութեան (Mysticism) տպաւորութիւն մը կը թողու, սակայն Փիլոն երբեք խորհրդապաշտ մը չէր, ընդհակառակը, Փիլոնի համաձայն Աստուծոյ հետ մարդոց *խորհրդապաշտական (միստիկ, յուն.՝ mystikós) միութիւն* մը (լատ.՝ unio mystica) անկարելիութիւն մըն է, նկատի ունենալով երկնային բնագանցական աշխարհի ու երկրային նիւթեղէն աշխարհի իր խիստ բաժանման գաղափարը: Նոյն պատճառով ալ, բոլորովին անկարելի է մարդկային «մասնակի լոգոս»ին եւ տիեզերական «ընդհանուր լոգոս»ին վերամիացումը (ինչպէս վերը յիշուեցաւ):

Փիլոնի համաձայն, դէպի Աստուած տանող ճիշդ ուղին *բարոյագիտութեան* ուղին է, այլ խօսքով՝ առաքինի կենցաղը: Այստեղ, Փիլոն կրնար միայն մովսիսական օրէնքներն ու պատուիրանները նկատի ունենալ, սակայն ան որպէս գերագոյն նպատակ կը շեշտէ նաեւ ստոյիկեան շատ օրինակելի *անտարբերութիւնը* (յուն.՝ adiaphoría, անգլ.՝ Indifference, գերմ.՝ Indifferenz), նոյնիսկ՝ *անզգայութիւնը* (յուն.՝ apátheia, անգլ.՝ Apathy, գերմ.՝ Apathie), որոնց միջոցով կա-

34 **Աստուածոտեսութիւն** (յուն.՝ theoptía, լատ.՝ visio Dei, անգլ.՝ Vision of God, գերմ.՝ Gottesschau).-

Աստուածոտեսութիւնը փիլիսոփայական ու աստուածաբանական հասկացութիւն մըն է, որ կը նշանակէ կեդրոնացած ու մտային-ոգեւոր խորհրդածութեան, ինչպէս նաեւ հայեցողութեան (Contemplation) ու ներհայեցողութեան (Intuition) միջոցներով զԱստուած ճանչնալ ու տեսնել: Յունարէնի մէջ հոմանիշ ունի «theória» եզրոյթը, որ հայերէնի կը թարգմանենք «տեսութիւն» եզրոյթով: